1. Աբգար Ավետիսյանից հօգուտ Արենի համայնքի բյուջեի գանձել 1.159.739 ՀՀ դրամ, որպես MERCEDES-BENZ S500 4MATIC մակնիշի 16 SP 016 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 179.864 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արենի համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում, միաժամանակ ներկայացնել գանձման ենթակա սույն ակտն անբողոքարկելի դառնալու օրվա դրությամբ առկա չվճարված հաշվարկված տույժերը, գումարը վճարվում է ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900355105165 հաշվեհամարին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հասցեատիրոջն իրազեկելու հաջորդող օրվանից:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Արենի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**